ԳՅՈՒՄՐԻ 2016

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍ

2010-16 ԹԹ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Հայկական Կարիտաս»-ի կամավորության գաղափարախոսությունը

«Հայկական Կարիտաս»-ի (ՀԿ) կամավորը կազմակերպության առաքելության եւ գաղափարախոսության հիմնական կրողներից է, քանզի կազմակերպության հիմնադրումից ի վեր կամավորները ընդգրկված են եղել կազմակերպության գործունեության տարբեր ոլորտներում: Տեսնելով միավորված կամավորների ներուժը՝ 2010 թվականից սկսած «Հայկական Կարիտաս»-ում կամավորական աշխատանքներ իրականացնելու գործընթացը դարձավ ինստիտուցիոնալ. «Հայկական Կարիտաս»-ը ձեռնամուխ եղավ «*Հայկական Կարիտաս*»-*ի Երիտասարդական Խորհրդի (ՀԿԵԽ)* ստեղծմանը, որը ներկայիս եւ պոտենցիալ կամավորներին միավորեց ընդհանուր հետաքրքրությունների եւ խնդիրների շուրջ: 2014թ-ից այն վերանվանվեց «*Հայկական Կարիտաս*»-*ի Կամավորական Կորպուս*, քանի որ սկզբունքը ոչ թե երիտասարդների ներգրավվածությունն է եղել, այլ կամավորական աշխատանքի քաջալերումը:

Ներկայումս գրեթե 80 կամավոր է ներգրավված «Հայկական Կարիտաս»-ի տարբեր ծրագրերում: Նրանք աշխատում են տարեցների, հաշմանդամություն ունեցող երեխաների, սոցիալապես անապահով ընտանիքների պատանիների հետ, մասնակցում են համայնքային տարաբնույթ ծրագրերի, ինչպես նաեւ կատարում են ադմինիստրատիվ աշխատանք «Հայկական Կարիտաս»-ի գրասենյակներում եւ կենտրոններում:

«Հայկական Կարիտաս»-ում ընդհանուր կամավորության գործելակերպը շատ համակարգված է: 80 տեղական եւ միջազգային կամավորներից բոլորը, ովքեր միանում են կազմակերպությանը, ելնելով իրենց հմտություններից, նախասիրություններից ու ծրագրային պահանջներից, ներգրավված են որոշակի աշխատանքներում:

«Հայկական Կարիտաս»-ում կամավոր համարվելու ամենակարեւոր առանձնահատկություններն են ճիշտ վերաբերմունքը, սովորելու ցանկությունը, սոցիալական արդարության ձգտումը եւ օգնելու պատրաստակամությունը: Կազմակերպությունը նաեւ ուսումնական պրակտիկայի հնարավորություն է տրամադրում հումանիտար գիտություններ ուսումնասիրող տեղական եւ միջազգային ուսանողներին: 2010թ-ից ի վեր կազմակերպությունն ունեցել է ավելի քան ***330*** կամավոր Հայաստանի տարբեր քաղաքներից, ինչպես նաեւ Չեխիայից, Ավստրիայից, Գերմանիայից, ԱՄՆ-ից:

Կամավորների ընդգրկման եւ աշխատանքի կանոնակարգը

Կամավորություն անելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր անձ կարող է միանալ Կամավորական Կորպուսին: Ընդունելությունը իրականացնելու նպատակով կազմվել է հայտադիմում եւ փոխըմբռնման հուշագիր, որով կարգավորվում է կազմակերպության եւ կամավորների հարաբերությունները:

Կամավորների հայտերի ընդունման ձեւը 2016թ-ի սեպտեմբերից փոխվել է: Մինչ այդ գործում էր կամավորների ընդգրկման բաց համակարգ, որի ժամանակ կամավորը կարող էր ցանկացած պահի ներկայացնել դիմում, որից հետո, ելնելով նրա հմտություններից ու կարողություններից, կամավորի դիմումը ստանում էր համապատասխան ընթացք: 2016թ-ի սեպտեմբեր ամսից սկիզբ դրվեց կամավորների հայտագրման նոր գործընթացին: Վերջինիս ժամանակ տեղի է ունենում տեղեկատվական հանդիպում, ապա՝ բաց դռների օր կամավորություն անելու ցանկություն ունեցող անձանց համար: Հանդիպման ժամանակ անձնակազմի կողմից ներկայացվում է կազմակերպության ծրագրերը եւ դրանցում կամավորների ներգրավման հնարավորությունները, իսկ ներկա կամավորները կիսվում են իրենց փորձով:

Հանդիպումից հետո կամավորություն անելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր անձ հնարավորություն ունի այցելելու Կենտրոններ՝ տեղում տարվող աշխատանքներին ծանոթանալու նպատակով:

Կամավորական աշխատանքի մասին բավարար պատկերացում ունենալուց հետո միայն լրացվում է հայտադիմումը, իսկ կամավորների աշխատանքը կանոնակարգվում է աշխատանքային նկարագրով եւ փոխըմբռնման հուշագրով: Յուրաքանչյուր կամավորի տրվում է տվյալ ծրագրում կամ Կենտրոնում կամավորից ակնկալվող աշխատանքի նկարագրությունը, եւ նրա հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով կնքվում է նաեւ փոխըմբռնման հուշագիր, որտեղ սահմանվում են կամավորի եւ կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները:



Կամավորական Կորպուսի կամավորների մեծամասնությունը 21-30 տարեկան ուսանողներն են, ովքեր համադրում են ուսումը կամավորության հետ:

Ստորեւ կարող եք տեսնել կամավորների *տարիքային վերլուծությունը.*



Աշխարհագրական ներգրավվածությունը

«Հայկական Կարիտաս»-ի ծրագրերում ներգրավված են կամավորներ Հայաստանի գրեթե 40 տարբեր համայնքներից: Սակայն նրանց մեծամասնությունը Գյումրի, Վանաձոր, Գավառ, Երեւան եւ Տաշիր քաղաքներից են:



Ըստ ոլորտների կամավորների ներգրավվածությունը հետեւյալն է.



Ըստ սեռերի կամավորների ներգրավվածությունը հետևյալն է.



2010-2016թթ ընթացքում թվով 43 կամավորներ աշխատանքի են անցել «Հայկական Կարիտաս»-ում, որը կամավորների ընդհանուր թվի մոտ 13%-ն է կազմում:

Բոլոր կենտրոններում մեկ տարում ակտիվ գործունեություն ծավալող կամավորների միջինացված թիվը տատանվում է 70-80-ի շրջակայքում:

«Հայկական Կարիտաս»-ի Կամավորական Կորպուսը զարգացման նոր հեռանկարներով եւ պոտենցիալով լի ինստիտուտ է, որն առանձնահատուկ կարեւորություն ունի ոչ միայն «Հայկական Կարիտաս»-ում, այլ նաեւ Հայաստանում՝ կամավորական աշխատանքի մշակույթի ձեւավորման եւ դրա հետագա զարգացման գործում: